

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1/5

13 հունվարի 2015 թ.

Քննարկվեց «Սոնա-Ելենա» ՍՊԸ 09.12.2014 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի ժ/պ 04.12.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 274705 որոշման դեմ:

«Սոնա-Ելենա» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ ԻՀԳ բաժնի պետի ստորագրությամբ իրավախախտման վերաբերյալ գործի քննությանն հրավիրելու վերաբերյալ ծանուցագիր է կազմվել 21.11.2014թ. ամսաթվով, որով Սոնա-Ելենա» ՍՊԸ հաշվապահ պատասխանատու Ա.Ալթունյանը (այսուհետ նաև բողոքաբեր) հրավիրվել է 26.11.2014թ. մասնակցելու քննությանը, որը տեղի էր ունենալու ք. Երևան, Մանթաշյան 27ա հասցեում:

Նշված ծանուցագիրն ուղարկվել է պատվիրված նամակով՝ 02.12.2014թ., որպիսի փաստը հավաստված է կապի բաժանմունքի կողմից ծրարի վրա դրված կնիքի դրոշմով:

ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի ժ/պ-ի ստորագրությամբ և կնիքով 04.12.2014թ. ամսաթվով կազմված ծանուցագիր է ուղարկվել բողոքաբերին պատվիրված նամակով, որը կապի բաժանմունքին է հանձնվել 05.12.2014թ.: Ծանուցագրում նշված է, որ ուղարկվում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 1695 հոդվածի 1-ին մասով 500.000 (հինգ հարյուր հազար) դրամ վարչական տուգանքի ենթարկելու մասին ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի 04.12.2014թ-ի թիվ 274705 որոշումը:

Առաջարկվում է մինչև 18.12.2014թ. վճարել տուգանքի գումարը և վճարման անդորրագրերը ներկայացնել հարկային տեսչություն: Նշված ժամկետում գումարը չմուծելու դեպքում այն կբռնագանձվի ԴԱՀԿ ծառայության միջոցով:

Ծանուցագրի հետ ուղարկվել է 04.12.2014թ. թիվ 274705 որոշումը, որում մասնավորապես արձանագրված է. «Ես՝ Շենգավիթի ՀՏ պետի ժ/պ Գ.Բենյամինյանս, քննելով 26.11.2014թ. թիվ 1918 վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը՝ Շենգավիթի ՀՏ-ի 21.10.2014թ-ի թիվ 6100232 ակտը.

Պարզեցի, որ «Սոնա-Ելենա» ՍՊԸ-ի հաշվապահ-պատասխանատու Արմեն Ալթունյանը (ք.Երևան, Դ.Մարան 42, 31 բն.) առանց ՀՀ օրենսդրությամբ կարգով գրավոր պայմանագրի կնքմամբ պահել է թվով 10 (տաս) վարձու աշխատող: Հիմք՝ Շենգավիթի ՀՏ-ի 21.10.2014թ-ի թիվ 6100232 ակտը:

Արարքը համապատասխանում է ՀՀ ՎԻՎ օր-քի 169.5 հոդվածի 1-ին մասի հատկանիշներին, որի համար ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 244/2 հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ Արմեն Ալթունյանին համաձայն ՀՀ ՎԻՎ օր-քի 169.5 հոդվածի 1-ին մասի ենթարկել վարչական պատասխանատվության նշանակելով տուգանք 500 000 դրամի չափով:

...»:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 267-րդ հոդվածի՝ «Վարչական պատասխանատվության ենթարկվող անձն իրավունք ունի ծանոթանալու գործի նյութերին, բացատրություններ տալու, ապացույցներ ներկայացնելու, միջնորդություններ հարուցելու, գործի քննության ընթացքում օգտվելու փաստաբանի իրավաբանական օգնությունից. (...) Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին»:

Փաստորեն, գործի քննության մասին բողոքաբերին ժամանակին չի ծանուցվել, այն քննվել է իր բացակայությամբ, որի արդյունքում զրկվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 267-րդ հոդվածով սահմանված իրավունքներն իրացնելու հնարավորությունից: Այսինքն, վարչական ակտն ընդունվել է օրենքի ակնհայտ և կոպիտ խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով բողոքաբերը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի ժ/պ 04.12.2014 թ-ի թիվ 274705 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Սոնա-Ելենա» ՍՊԸ հաշվապահ պատասխանատու Ա.Ալթունյանն առանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր պայմանագրերի կնքման պահել է թվով 10 (տաս) վարձու աշխատող, հիմք՝ ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 21.10.2014 թ-ի թիվ 6100232 ակտը: Նշված արարքը համապատասխանում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.5-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներին: Արդյունքում, ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի ժ/պ 04.12.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 274705 որոշմամբ Ա.Ալթունյան ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 500.000 դրամի չափով:

Հարկ է նշել, որ «Սոնա-Ելենա» ՍՊԸ-ի հաշվապահ պատասխանատու Ա.Ալթունյանը, որպես վարչական պատասխանատվության ենթարկվող անձ, փոստային ծառայության միջոցով հրավիրվել է Շենգավիթի հարկային տեսչություն 26.11.2014թ-ին կայանալիք վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու համար: Ծանուցագիրը վերջինիս կողմից ստացվել է 15.11.2014թ.-ին, ինչի վերաբերյալ առկա է փոստային ծառայության համապատասխան անդորրագիրը: Սակայն, 26.11.2014թ-ին բողոքաբերը չի ներկայացել հարկային տեսչություն: Հաշվի առնելով պատշաճ ծանուցված լինելու հանգամանքը, առանց բողոքաբերի մասնակցության Շենգավիթի ՀՏ ԻՀԳ բաժնի առաջատար մասնագետ Հ.Հակոբյանի կողմից կազմվել է վարչական

իրավախախտման վերաբերյալ թիվ 1908 արձանագրությունը: Արձանագրությունը, ինչպես նաև վարչական իրավախախտման գործի վերաբերյալ որոշում կայացնելու քննությանը 04.12.2014թ-ին մասնակցելու վերաբերյալ ծանուցագիրը փոստային ծառայության միջոցով նույն օրը ուղարկվել են Ա.Ալթունյանին, որոնք վերջինս ստացել է 29.11.2014թ-ին:

04.12.2014թ-ին Ա.Ալթունյանինը չի ներկայացել հարկային տեսչություն, որի հետևանքով առանց վերջինիս մասնակցության, հաշվի առնելով պատշաճ ծանուցված լինելու հանգամանքը, Շենգավիթի ՀՏ պետի ժ/պ կողմից 04.12.2014թ-ին կայացվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 274705 որոշումը, որով Ա.Ալթունյանը համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.5 հոդվածի 1-ին մասի ենթարկվել է վարչական պատասխանատվության 500.000 դրամի չափով: Այնուհետև, նույն օրը որոշումը կից ծանուցագրով, որով առաջարկվել է Արմեն Ալթունյանին մինչև 18.12.2014թ-ը վճարել տուգանքի գումարը և վճարման անդորրագրերը ներկայացնել հարկային տեսչություն, ուղարկվել է Արմեն Ալթունյանին: Որոշումը և ծանուցագիրը վերջինիս կողմից ստացվել է 06.12.2014թ-ին:

Բողոքում 21.11.2014թ-ի վարչական իրավախախտման վերաբերյալ ծանուցագրի վերաբերյալ բերված պնդումների կապակցությամբ պետք է նշել, որ այն սույն գործի հետ որևէ առնչություն չունի: Նշված ծանուցագիրը բողոքաբերին է ուղարկվել վարչական իրավախախտման վերաբերյալ մեկ այլ գործով, այն է՝ հարկային մարմին հաշվարկ-հաշվետվություններ օրենքով սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու համար:

Ինչ վերաբերվում է բողոքում բերված «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 267-րդ հոդվածի մեջբերմանը, ապա այն տեղին չէ, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը 267-րդ հոդված չունի: Նշված մեջբերումը սահմանված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի ժ/պ 04.12.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 274705 որոշումն ընդունվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի ժ/պ 04.12.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 274705 որոշումը թողնել է անփոփոխ, իսկ բողոքը՝ առանց բավարարման:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

